# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

4 Սեպտեմբերի 2019 թ.
№ 10 (1044)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 54-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՆԱԹԵՐԹ


# ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԼՈՒՍԱՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ

**Թշվառ է այն ազգը, որ չի մեծարում և ապահովում իր ուսուցչին:**

**Ղազարոս ԱՂԱՅԱՆ**

Գիտելիքի ու դպրության օրը Հայաստանում յուրահատուկ խորհուրդ և ընկալում ունի: Կրթության լույսի հանդեպ մեր ազգային մոտեցումը մեր գենետիկական հիշողության արտահայտությունն է, տարատեսակ մարտահրավերների դեմ մեր հաղթաթուղթը: Գիտելիքով զինված՝ մենք անխոցելի ու անպարտ ենք, որը մեզ իրավունք է տալիս հաստատել մեր տեղը արևի տակ, համարձակ քայլել դժվարություններին ընդառաջ:

Իր կամարների ներքո Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն արդեն քանի՞ սերունդ է ընդունում ու ճանապարհում դեպի կյանք, քանի՞ ուսանող է այստեղ մասնագիտանում ու նվիրվում իր առաքելությանը… Մանկավարժական կադրերի պատրաստման այս երթը հավերժական է, քանի դեռ կան նվիրյալ ուսուցանողներ, քանի դեռ կրթությունն է մեր ազգային երթը լուսավորող ճանապարհը:

Նոր ուսումնական տարվա մեկնարկը տրվեց Մանկավարժական համալսարանում, բուհի հիմնական և ավագ դպրոցներում:

➤2

# ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

**ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԸ՝ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ**

Մանկավարժական համալսարանում հուլիսի 1-ին ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում տեղի ունեցավ սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների բացման հանդիսավոր արարողությունը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը:

«Վերջին երեք տարիների ընթացքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը Մանկավարժական համալսարանում իրականացնում է սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում: Ձեր աշխատանքն ուղղված է սփյուռքում մայրենիի պահպանմանը, ներկայացնելու ազգային մշակույթը և այս առումով այն ունի բացառիկ նշանակություն,-ասաց ռեկտորը:-Հավաստիացնում եմ ձեզ, որ այս դասընթացների կազմակերպիչները խոր գիտակցությամբ են մոտենում նշված իրողությանը: Մենք կանենք ամեն ինչ, որ դասընթացներն իրականան բարձր որակով:

Մենք հեռու ենք այն մտքից, որ դասընթացները կատարյալ են, որովհետև միշտ հնարավոր է հարստացնել, նոր շունչ ու որակ հաղորդել: Շատ կարևոր է, որ դուք հայրենիքում եք և մասնակից կլինեք այն գործընթացներին, որ տեղի են ունենում հայրենիքում, հայրենիքի շունչը, ոգին, մարդկանց հետ հարաբերությունները կտեղափոխեք ձեր ամենօրյա գործունեության մեջ»:

Ուսուցիչների ողջունեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը:

«Հերթական վերապատրաստումների փուլն ենք սկսում և հերթական անգամ կարևորում ենք գործընթացը, որովհետև դուք Սփյուռքում հայերենի գլխավոր պահապաններն եք և ամեն անգամ այստեղ նոր մեթոդներ կիրառելով և դրանք տանելով համայնքներ՝ էլ ավելի եք ուժեղացնում այն կրթական հաստատությունների դիրքն ու դերը, որոնք ներկայացնում եք: Մենք այս վերապատրաստումներով ձգտում ենք ստեղծել հայերենի դասավանդման և ընդհանուր հանրակրթական մեկ դաշտ: Մենք ձեզնից տեղեկանում ենք համայնքներում առկա խնդիրների մասին և դասավանդման մեթոդաբանությունը փոխում ենք դրանց համապատասխան»:

2000-ականներից ավելի քան 1500 ուսուցիչ վերապատրաստվել է հայրենիքում: Նախարարն ընդգծեց, որ այսուհետև բոլոր վերապատրաստում-

➤3

**«ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ-2019»**

# ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ, ՏՊԱՎՈՐԻՉ ԵՎ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ

Ավարտվեց Մանկավարժական համալսարանի կազմակերպած հերթական «Ամառային դպրոց» ծրագիրը, որն այս տարի ևս Հայաստան բերեց բազմաթիվ օտարերկրյա ուսանողների:

Արդեն յոթերորդ տարին Մանկավարժական համալսարանն անցկացնում է ուսանողների փոխանակման, ուսումնակրթական, ժամանցային միջազգային այս ծրագիրը. «Ամառային դպրոց 2019» միջազգային ծրագրին այս տարի մասնակցեց ավելի քան 60 ուսանող ՀՊՄՀ-ից և արտասահմանյան գործընկեր համալսարաններից՝ Ռուսաստանից, Բելառուսից, Չեխիայից, Լեհաստանից, Չինաստանից, Արցախից:

Անմոռանալի, հետաքրքիր և հագեցած 10 օրերը գեղեցիկ ձեռնարկով ամփոփվեցին ՀՊՄՀ Աղավնաձորի ուսումնական բազայում:

Բուհի աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանը շնորհավորեց մասնակիցներին ծրագրի արդյունավետ անցկացման առթիվ և հույս հայտնեց, որ ծրագրի շնորհիվ մասնակիցները ձեռք բերեցին նոր ընկերներ, ծանոթացան միմյանց մշակույթներին և վայելեցին բովանդակալի ուսանողական առօրյա:

«Հրաշալի է, երբ հավաքվում են տարբեր երկրների երիտասարդներ և փոխանակում մտքեր, փորձ, հմտություններ: Մեր ողջույնները ձեր համալսարաններին, որոնց հետ ունենք արդյունավետ համագործակցություն»,-ասաց պրոռեկտորը՝ մասնակիցներին հանձնելով հավաստագրեր:

«Ամենամյա այս ծրագիրը ոչ միայն միջմշակութային երկխոսություն է, այլև մասնակիցներին բազմաթիվ նոր հմտություններով, գիտելիքներով, փորձով և բացահայտումներով զինելու լավագույն ձև. մասնակիցները սովորում են, համեմատում ու բացահայտում նոր արժեքներ»,- ասաց ՀՊՄՀ միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Մարիաննա Հարությունյանն ու հավելեց՝ սա կրկնակի կարևոր է հատկապես Մանկավարժական համալսարանի ուսանողների համար. նրանք միջազգայնացման գործընթացին ծանոթանում են

➤5

# ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ ՈՒՍՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ Է

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը օգոստոսի 30-ին հանդիպեց բուհի պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Նա շնորհավորեց բոլորին նոր ուսումնական տարվա առթիվ և մաղթեց արդյունավետ աշխատանք:

Ռեկտորը խոսեց բուհական ընդունելության, հաստիքների կրճատման, միջազգային ծրագրերի իրականացման, կատարված աշխատանքների ու առաջիկա անելիքների մասին:

Համալսարանի ղեկավարն ասաց, որ դասախոսական հաստիքների կրճատումը պայմանավորված էր դիմորդների թվի նվազումով, ապա իր գոհունակությունը հայտնեց «Ամառային դպրոց» և Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրերը բարձր մակարդակով կազմակերպելու, նաև համալսարանական ավագ դպրոցի (վարժարանի) ընդունելության առթիվ:

Խոսելով դասախոսական ոչ բարձր աշխատավարձերի մասին՝ ռեկտորը դասախոսներին հորդորեց օտար լեզուներ սովորել և մասնակցել միջազգային ծրագրերի: Նա հավելեց, որ այդ ծրագրերին մասնակցության հայտ ներկայացնող ուսանողներին հաճախ չի բավարարում օտար լեզուների իմացությունը:

Բուհի ղեկավարը կարևորեց ուսուցիչների «Ֆինանսական կրթությունը դպրոցում» վերապատրաստումների ծրագիրը ՀՀ Կենտրոնական բանկի հետ՝ այդ գործում ընդգծելով Մանկավարժական համալսարանի և ծրագրում ընդգրկված դասախոսների դերը:

Ռ. Միրզախանյանն անդրադարձավ Չինաստանի, Չեխիայի և այլ երկրների առաջատար բուհերի հետ դասախոսների և ուսանողների փոխանակման, աշխատողների բժշկական ապահովագրության, ինչպես նաև այլ հարցերի:

Ռեկտորը կարևորեց բուհի համակազմի պահպանումն ու լրացումը՝ որպես մարզային դպրոցները մանկավարժական կադրերով ապահովելու ազգային կարևոր խնդիր՝ շեշտը դնելով ամենակարևորի՝ ուսուցման որակի բարձրացման վրա:

# ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԼՈՒՍԱՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ

## ԱՄԵՆ ՍԵՐՈՒՆԴ ՄԻ ՆՈՐ ԳՈՒՅՆ Է ԲԵՐՈՒՄ

➤1 Սեպտեմբերի 1-ին ուրախ աշխույժով ու խինդով էր լցվել Մանկավարժական համալսարանի դ 57 հիմնական դպրոցը: Իններորդ դասարանի աշակերտները նվերներով դիմավորեցին առաջին դասարանցիներին, դասղեկ Մելինե Միքայելյանի հետ նրանց ուղեկցեցին դպրոց:

Այս տարի համալսարանական դպրոցի աշակերտական և ուսուցչական կոլեկտիվները Գիտելիքի և դպրության օրը նշեցին Սիմոն Վրացյան 75 հասցեում գտնվող դպրոցում, որտեղ առաջին հայացքից աչք էին շոյում վերանորոգված ու լուսավոր դասարանները:

400-ից ավելի աշակերտներ ունեցող դպրոցն այս տարի ունի երկու առաջին դասարան: Կոկիկ հագնված, ծաղիկների ու փուչիկների արանքից մի քիչ վախվորած հայացքներով փոքրիկներին բարի երթ մաղթեցին ավագ դպրոցականները, ուսուցիչներն ու հյուրերը: «Կա՛նգ առ, ժամանա՛կ, մենք մոլորվել ենք»,-մեղմ ու շփոթված ասմունքում էին փոքրիկները: Ամեն ինչ նոր էր նրանց համար՝ նոր միջավայր, դասվար, որ

փոխարինելու է մանկապարտեզի դաստիարակին… Ուսուցիչների ջերմ հայացքների ներքո նրանք շուտով կհասկանան, որ սա իրենց կյանքի ամենագեղեցիկ ու կարևոր ժամանակահատվածի սկիզբն է:

Ելույթ ունեցան դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը, Մոսկվայի «Վերածնունդ» կիրակնօրյա դպրոցի տնօրեն Շողիկ Փահլևանյանը: Շ. Փահլևանյանը գրքեր նվիրեց համալսարանական դպրոցի տնօրենին, մաղթեց հաջողություններով լի ուսումնական տարի՝ կարևորելով երկու դպրոցների միջև ավանդական դարձած բարեկամությունը:

«Արդեն հինգերորդ տարին է, թվում էր, թե արդեն սովորական է դարձել ամեն ինչ, բայց նորից հուզվում եմ…Ե՛վ մենք ենք հայտնվել նոր շենքում, և՛ դպրոցականները… Ամեն սերունդ իր հետ մի նոր գույն է բերում, մի նոր էջ բացում դպրոցի պատմության մեջ: Կոլեկտիվն այս անգամ էլ միավորվեց՝ նոր դպրոցում պատշաճ մակարդակով սկսելու նոր ուսումնական տարին: Մեր ուսուցիչները փորձառու են, ամեն ինչ անում ենք աշակերտներին բարձր գիտելիքներ տալու և նրանց դպրոցական առօրյան լավ կազմակերպելու համար»,-ասաց դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը: Նա բարեմաղթանքի խոսքեր հղեց աշակերտներին, ուսուցիչներին, ծնողներին, շնորհավորեց նոր ուսումնական տարվա առթիվ:

Իններորդ դասարանցիներն առաջին դասարանցիներին փոխանցեցին կրթության դուռը բացող խորհրդանշական բանալին՝ վստահեցնելով, որ գիտելիքը, միայն գիտելիքն է կյանքի ճանապարհը խորհրդանշող լույսի շողը:

## ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԵՆ ԲՈԼՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հենակետային վարժարան (ավագ դպրոց) այս տարի ոտք դրեց 6 ենթահոսքերի 144 աշակերտ: Նրանց շնորհավորեց ու բարեմաղթանքի ջերմ խոսքեր հղեց վարժարանի տնօրեն Նաիրա Սաֆարյանը: Նա մասնավորապես ասաց, որ վարժարանում լիարժեք կրթության համար ստեղծված են բոլոր պայմանները և հորդորեց սաներին՝ լավ սովորեն, բացահայտեն իրենց ընդունակությունները, դառնան երկրի համար լավ քաղաքացիներ: Տնօրեն Նաիրա Սաֆարյանը վստահ է՝ հաջողություններով ու նվաճումներով լի ուսումնական տարին առջևում է:

## ԴԻՄԱՎՈՐԵՑԻՆ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻՆ

2019-2020 ուսումնական տարում Մանկավարժական համալսարանն իր դռները բացեց առկա համակարգում սովորող բակալավրիատի շուրջ 750 և մագիստրատուրայի 450 առաջին կուրսեցիների առջև:

Համալսարանի բոլոր ֆակուլտետներում առաջին օրվա եռուզեռ էր. 10 ֆալուլտետների դեկանները, ամբիոնների վարիչները, կուրսերի ղեկավարները, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողական կառույցների ներկայացուցիչները առաջինը դիմավորեցին նորեկներին, շնորհավորեցին և մաղթեցին հաջող ուսումնառություն Մանկավարժական համալսարանում: Առաջին կուրսեցիներին ուղղված իրենց շնորհավորական ուղերձներում նրանք ընդգծեցին Մանկավարժական համալսարանի դերակատարությունն ու առաքելությունը մեր երկրի համար մանկավարժական կադրեր պատրաստելու գործում, բարի երթ մաղթեցին և հաջողություններ առաջին ուսումնական տարում:

Սիրելի՛ աշակերտներ և ուսանողներ, դասախոսներ և ուսուցիչներ, կրթության ոլորտի աշխատողներ, Մանկավարժական համալսարանը շնորհավորում է բոլորիդ նոր ուսումնական տարվա առթիվ և մաղթում ստեղծագործական աշխատանք, մեծ նվիրում մանկավարժի կոչմանը և գիտելիքներով զինվելու անսպառ եռանդ: Թող որ նոր ուսումնական տարին երազանքների իրականացման, նոր նվաճումների ձեռքբերման ու կրթության լույսի հանդեպ նոր ձգտումների սկիզբ դառնա:

## ԲԱՑԱՌԻԿ ՑՈՒՑԱՍՐԱՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում սեպտեմբերի 2-ին բացված ցուցասրահն իր տեսակի մեջ բացառիկ է: Նորաբաց ցուցասրահում ցուցադրված է 90 աշխատանք. դրանք ֆակուլտետում դասավանդած և ներկայումս գիտամանկավարժական գործունեություն ծավալող արվեստագետ-մանկավարժների ստեղծագործություններն են:

«Չկա մեր մշակույթի ու արվեստի մեծությունների հիշատակը վառ պահելու, հավերժացնելու բացառիկ արտահայտության ձև, քան նրանց ստեղծագործությունների

ներկայությունը կրթական միջավայրում»,-իր ելույթում ասաց համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: Ռեկտորը կարևորեց իր տեսակի մեջ առանձնահատուկ լսարանի բացումը, որի մթնոլորտը ուսանողների՝ ապագա արվեստագետների համար կլինի ոգեշնչման աղբյուր:

«Եթե իսկական ուսուցիչը բնությունն է, ապա ուսումնական հաստատության ներսում իսկական ուսուցիչը պատերին փակցված աշխատանքներն են»,-մեջբերելով մեծանուն նկարիչ Վարդգես Սուրենյանցի խոսքը՝ նշեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը:

Ցուցասրահ-լսարանի բացումը միաժամանակ արվեստասեր հասարակությանը կներկայացի Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի պատմությունը կերտած և կերտող արվեստագետներին, որոնց մեծ մասը ՀՀ վաստակավոր, ժողովրդական նկարիչներ են:

Հավելենք, որ նման ցուցասրահ-լսարան Հայաստանի ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատությունում դեռևս չկա: Այստեղ ցուցադրված են ՀՀ ժողովրդական նկարիչներ Էդվարդ Իսաբեկյանի, Արտաշես Հովսեփյանի, Զաքար Խաչատրյանի, Լևոն Կոջոյանի, Արա Շիրազի և այլոց ստեղծագործությունները:

Ֆակուլտետում բացված ցուցասրահը դառնալու է մշակութային քննարկումների ու արվեստագետների հետ հետաքրքիր հանդիպումների վայր, որտեղ իրականացվող ձեռնարկները ապագա արվեստագետների կյանքում անմոռանալի հուշեր կթողնեն:

Ուսումնական տարվա այսպիսի մուտքը հաճելիորեն ուրախացրեց թե՛ ուսանողներին, թե՛ բուհի արվեստագետ շրջանավարտներին, որոնք մինչև այսօր իրենց էջն են գրում համալսարանի պատմության մեջ:

# Գերազանցության դիպլոմները հանձնեց Տիգրան Մանսուրյանը

Հուլիսի 1-ը երկար կմնա 2018-2019 ուսումնական տարվա Մանկավարժական համալսարանի բակալավրիատը և մագիստրատուրան գերազանցությամբ ավարտած 21 ուսանողի հիշողության մեջ:

Հանդիսավոր արարողությանը առանձնահատուկ շուք հաղորդեց ՀՀ ժողովրդական արտիստ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ մաեստրո Տիգրան Մանսուրյանի ներկայությունը, որը բարի երթ մաղթեց շրջանավարտներին և հանձնեց գերազանցության դիպլոմները:

«Հրաշալի օր է այսօր, դուք ավարտում եք ձեր կյանքի մի կարևոր փուլը,-ասաց մաեստրոն:-Մանկավարժական համալսարանը բուհական հաստատություն է, որը կրում է հայ ժողովրդի համար մի սուրբ անուն՝ Խաչատուր Աբովյանի անունը:

Տարբեր մասնագիտություններ ստացած՝ այսօր դուք գնում եք դեպի կյանքի մեկ այլ փուլ. թող կանաչ լինի ձեր անցնելիք ճանապարհը և ձեզ ուրախության հաճույք պատճառի»:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի շրջանավարտ Գագիկ Ավետիսյանը բոլոր շրջանավարտ անունից երախտագիտության խոսք հղեց հարազատ կրթօջախին և դասախոսներին, որոնք ուսանողակենտրոն գործունեությամբ օգնել են իրենց գիտելիքներ ձեռք բերելու, կայանալու և պահպանելու համալսարանի ավանդույթները:

Հանդիսավոր միջոցառումն ավարտվեց համերգային ծրագրով: Գեղեցիկ կատարումներով հանդես եկան Ազգային նվագարանների պետական նվագախումբը՝ ՀՀ վաստակավոր արտիստ, Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնի պրոֆեսոր Նորայր Դավթյանի ղեկավարությամբ, Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության ամբիոնի «Ավե Մարիա» երգչախումբը, գեղարվեստական ղեկավար՝ դոցենտ Արտաշես Բաբուրյան, Կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի մանկավարժության ամբիոնի պարային անսամբլը՝ գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյան:

2018-2019 ուսումնական տարում բուհն ավարտում է 2416 շրջանավարտ, որից 1769 բակալավր, 647 մագիստրոս (առկա), 706 բակալավր, 88 մագիստրոս (հեռակա) :

Բուհը գերազանցությամբ ավարտում է 397շրջանավարտ:

# ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

➤1 ները իրականացնելու է նախարարությունը, որը թույլ է տալիս իրականացնել միասնական քաղաքականություն: Նախարարությունը քննարկում է հայագիտության նոր փաստաթուղթ, որի շրջանակներում էլ ավելի է կարևորվելու հայագիտությունը:

Ա. Հարությունյանը Սփյուռքից եկած ուսուցիչներին հաճելի օրեր մաղթեց հայրենիքում՝ ողջույններ հղելով նաև նրանց աշակերտներին:

Սփյուռքի գործերի հատուկ հանձնակատար Զարեհ Սինանյանը բարի գալուստ մաղթեց սփյուռքից ժամանած ուսուցիչներին՝ ասելով, որ սեփական փորձից գիտի, թե ինչ կարևոր աշխատանք է կատարում սփյուռքահայ ուսուցիչը: Նրա չորս երեխաները հայրենիքից հեռու հայեցի կրթություն են ստացել:

«Մենք լիովին գիտակցում ենք ձեր աշխատանքի կարևորությունը, Սփյուռքում դուք հայանպաստ, ազգանվեր աշխատանք եք կատարում: Այստեղ ձեզ անչափ կարևոր դասընթաց է սպասվում: Փոխանցեք մեր խոսքը ձեր աշակերտներին և ծնողներին, հուսով եմ, որ հաճախ կայցելեք հայրենիք»,-ասաց Զ. Սինանյանը:

«Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի ղեկավար, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը ասաց. «Մեր կենտրոնը պատիվ է ունեցել նորանկախ Հայաստանում լինել նոր, ազգային գաղափարախոսությամբ հագեցած մանկավարժական ոստան հաստատությունը: 2000 թվականից մենք կարողացանք վերստեղծել երբեմնի երկչոտ, խորքային բովանդակությամբ վերապատրաստումներ՝ դրանց հաղորդելով նոր հուն: Մեզ հաջողվեց ստեղծել կուռ, միասնական դարբնոց, որտեղ թիրախը ոչ այնքան սփյուռքահայ ուսուցիչների այսօրվա խնդիրներն են, որքան առաջնային վերապատրաստությունից անցումը պատրաստության»:

Պրոֆեսորը կարևորեց հայերենի, ազգային պաշտպանության եղանակների նոր որոնումները, ամեն անգամ ազգայինի նորովի մատուցումը՝ համոզված, որ քննարկումները բերում են նոր եղանակների, մեթոդների ընտրության և պաշտպանության:

«Հավատացեք, որ հուսո շող են այս դասընթացները: Վստահ ենք, որ մեր ճանաչողությամբ և փորձով զորավիգ կլինենք ձեզ:

Մանկավարժական համալսարանում դուք կհաղթահարեք հայ գրականության և լեզվի Արարատը»:

«Սովորաբար կրթության և գիտության ոլորտի աշխատակիցներն ամռանը հանգստանում են, բայց տարիներ շարունակ այս վերապատրաստումները մեզ ստիպում են շարունակել աշխատանքը: Սա ունի կարևոր նպատակ՝ աշխատում ենք սփյուռքի ուսուցիչների հետ,-ասաց ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը:-Ինձ համար մեծագույն հաճույք է: Այդ դասընթացների ժամանակ մենք ինքներս էլ սովորում ենք: Հանգամանքների բերումով հաճախ եմ լինում աշխարհի տարբեր երկրներում և պարտադիր այցելում եմ երեք կարևոր հաստատություն՝ դպրոց, եկեղեցի և դեսպանություն: Այն ահռելի աշխատանքը, որ դուք կատարում եք որպես ուսուցիչներ՝ երեխաների ներաշխարհն էլ հայ պահելով, շնորհակալ աշխատանք է: Համահայկական մտածողություն, գաղափարախոսություն, աշխարհայացք ձևավորելու գործում այս հսկայական աշխատանքը շարունակում եք հաճույքով կատարել»:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանի կարծիքով՝ շատ ճիշտ է ընտրությունը Մանկավարժական համալսարանում անցկացնելու սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացները»: Պրոֆեսորը մեջբերում անելով ֆրանսիացի հայագետի խոսքից՝ «Եթե որևէ մեկն ուզում է իմանալ, թե ով է հայը, թող կարդա Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը», վստահեցրեց՝ Խ. Աբովյանի պատգամները մեզ մոտ ապրում են, և մենք միշտ նայում ենք առաջ»:

«Շատ դժվար է ապրել և աշխատել Հայրենիքից դուրս, այստեղ՝ Հայաստանում, մենք մեզ զգում ենք ինչպես մեր հարազատ օջախում»,- ասաց ՀՊՄՀ շրջանավարտ, Մոսկվայում դասավանդող ուսուցչուհին:

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ՌԵԿՏՈՐԻ ՀԵՏ

Հայրենիքում վերապատրաստվող սփյուռքահայ ուսուցիչները հանդիպեցին Մանկավարժական համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանի հետ: Բուհի ղեկավարը հավաստիացրեց, որ համալսարանը մեծ պատասխանատվությամբ է վերաբերվում ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին: Ներկայացնելով բուհը՝ ռեկտորը հանգամանորեն խոսեց Մանկավարժական համալսարանի գործունեության, մասնավորապես 60 մասնագիտությունների գծով ուսուցիչների և 16 ուղղություններով մշակույթի ոլորտի մասնագետների պատրաստման, ինչպես նաև ներառական և հատուկ կրթության մասնագետների պատրաստման գործում ՀՊՄՀ մենաշնորհային գործունեության մասին:

Ռեկտորը ներկայացրեց, որ համալսարանը, կրթական ուղղվածությունից բա-

ցի, միտված է դառնալու գիտահետազոտական կենտրոն. բուհն այսօր ունի 14 գիտական լաբորատորիա, իսկ Շախմատի գիտահետազոտական կենտրոնն օրեցօր ճանաչում է ձեռք բերում աշխարհի տարբեր երկրներում:

Հանդիպումը շարունակվեց հարցուպատասխանով: Ռեկտորին իրենց հուզող հարցերն ուղղեցին սիրիահայ, ԱՄՆ-ում ապրող Լինտա Գարանտերեան-Քելեջյանը, Ստավրոպոլի մարզի Կիսլովոդսկ քաղաքից՝ Լաուրա Մարգարյանը, Իրանի Թեհրան քաղաքից՝ Անժել Մինասյանը, Ֆրանսիայից՝ Ռուզաննա Նիկողոսյանը, Սիրիայից՝ Սոսե Քեչիկյանը, Օդեսայից՝ Կարինե Հովհաննիսյանը:

Գործնական զրույց ծավալվեց հայկական Սփյուռքում գործող ամենօրյա, կիրակնօրյա, հայկական եկեղեցիներին կից գործող դպրոցների շուրջ:

Ուսուցիչները շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության, բարձր մակարդակով կազմակերպված դասընթացների, հայրենիքը ըմբոշխնելու հնարավորություն ընձեռելու համար:

ՀՊՄՀ «Սփյուռք» կենտրոնի տնօրեն պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը շնորհակալություն հայտնեց հետաքրքիր երկխոսության համար՝ հավելելով, որ Սփյուռքից եկած ուսուցիչները չորս շաբաթ այստեղ սվորելով, իրենց մտքի մեջ մեծ տեղաշարժ են տեսնում: Պրոֆեսորը լիահույս է՝ նրանք կդառնան համալսարանի ջատագովները՝ իրենց հետագա ուսումնական և գիտական ճանապարհը կապելով Մանկավարժական համալսարանի հետ:

«Մեր ոգեղեն հայրենիքը տեսանք ձեր մտահղացման շնորհիվ, սա մեծ տոն է ուսուցիչների համար»,-վստահեցրին սփյուռքահայ ուսուցիչները՝ լիահույս, որ հայրենիքից կվերադառնան նոր լիցքեր և նոր ուժ ստացած:

# ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

«Մենք պետք է տևենք: Իսկ մեր լեզվի տևականությունը դուք եք ապահովում, դուք այդ գործում մեծագույն առաքելություն ունեք, երբ աշխարհի տարբեր երկրներում հայ երեխաների եք դասավանդում»,-ՀՊՄՀ-ում վերապատրաստվող սփյուռքահայ ուսուցիչների հետ հանդիպման ժամանակ նշեց ՀՀ ժողովրդական արտիստ, հռչակավոր կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը:

Հանդիպումն ընթացավ հարց ու պատասխանի ձևաչափով. ուսուցիչները հետաքրքվեցին իր և Կոմիտասի արվեստի միջև ձգված ճանապարհի, համաշխարհային երաժշտարվեստում հայկական երաժշտության դիրքով, կոմպոզիտորի իրականացված և չիրականացված երազանքներով և այլն:

«Կոմիտասը հայ կոմպոզիտորական արվեստի հիմնադիրն է, ում հաջողվեց համադրել ու բյուրեղացնել երաժշտական մի քանի շերտեր»: Տիգրան Մանսուրյանը պատմեց, որ իրենց տանը հոր կատարմամբ մշտապես հնչել են Կոմիտասի ստեղծագործությունները, և ինքը մեծացել է կոմիտասյան ոգով ներծծված մթնոլորտում: Գնահատելով իր արվեստը՝ մաեստրոն նկատեց, որ տարիների ընթացքում մնաց երաժշտությունը սիրող, որովհետև դա կենսակերպ է, առանց երաժշտության ապրելու անհնարինություն:

Խոսելով հայոց լեզվի երաժշտականության մասին՝ կոմպոզիտորը վստահեցրեց, որ երաժշտությունը և հայոց լեզուն սերտորեն կապված են միմյանց. «Այն իր շեշտադրությամբ ու հնչյուններով արդեն իսկ երաժշտություն է»:

Հետահայաց վերլուծելով ստեղծագործական իր հարուստ ժառանգությունը, սակայն, մաեստրոն խոստովանեց՝ մեծ թվով պարտքեր ունի. չնայած ունենք հոգևոր երաժշտության հսկայական աղբյուրներ, սակայն անկախության տարիներին չենք կարողացել նոր հմայք տալ և այն ներկայացնել մեծ բեմերում՝ մնալով տեսակին հավատարիմ:

«Ձեր երաժշտությամբ մի մեծ աշխարհ եք նվիրել մեզ, որով արտահայտվում են մեր հույզերն ու հայրենասիրությունը»,-ասաց պրոֆեսոր Ս. Դանիելյանն ու մաեստրոյին խորհուրդ տվեց 80-ամյա բարձունքից վայելել այն անհուն սերը, որ կա և՛ Հայաստանում, և՛ Սփյուռքում:

Հանդիպման մասնակիցները վայելեցին նաև կոմպոզիտորի ստեղծագործություններից մեկի՝ «Կտոր մը երկինք»-ի կենդանի կատարումը:

Սփյուռքահայ ուսուցիչները հանդիպեցին նաև մանկավարժական համալսարանի խորհրդի նախագահ Դավիթ Գյուրջինյանի հետ: Ուսուցչներին իր նստավայրում հանդիպեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը:

**Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ**

# Վերապատրաստման դասընթացների ծրագրի ավարտը

Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացն անփոփվեց հավաստագրերի հանձնմամբ: Մանկավարժական համալսարանում ուսուցիչներին շնորհավորեց Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ Արկադի Պապոյանը՝ վստահ, որ ծրագրի մասնակիցները ձեռք բերած կարողություններն ու հմտությունները կծառայեցնեն հայապահպանության գործին: Ա. Պապոյանը շնորհակալություն հայտնեց նաև մանկավարժական համալսարանի ղեկավարությանն ու ծրագրի ներկայացուցիչներին՝ վերապատրաստումները կրթական, մշակութային բաղադրիչներով հարստացնելու և անհրաժեշտ միջավայր ապահովելու համար: Վերապատրաստված ուսուցիչներին համալսարանի ղեկավարության անունից շնորհավորեց նաև ՀՊՄՀ պրոռեկտոր Արա Երեմյանը՝ նրանց անվանելով հայոց լեզվի դեսպաններ, որոնք տարբեր երկրներում ազգապահպան և հայապահպան աշխատանք են կատարում:

Պրոռեկտոր Երեմյանն ընդգծեց ԿԳՄՍ նախարարության քաղաքական կամքի և մանկավարժական համալսարանի հետևողական աշխատանքի շնորհիվ հավուր պատշաճի իրականացվող ամենամյա վերապատրաստման հանդեպ նոր մոտեցումներ ցուցաբերելու պատրաստակամությունը:

Պրոֆեսոր Ս. Դանիելյանը հպարտ է, որ սփյուռքահայ ուսուցիչները Խաչատուր Աբովյանի անունը կրող հաստատությունում հաջողությամբ լրացրին իրենց գիտելիքների պակասը, իսկ սփյուռքահայ ուսուցիչները շնորհակալություն հայտնեցին վերապատրաստումները բարձր մակարդակով կազմակերպելու համար, որի ընթացքում ոչ միայն նոր գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերին, այլև եղան հայրենիքի տարբեր տեսարժան վայրերում, մասնակցեցին մշակութային միջոցառումների:

Արդեն 3-րդ տարին Մանկավարժական համալսարանը ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ իրականացրեց սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում: Ծրագիրը տևեց հուլիսի 1-26-ը, որին ուսումնական 5 խմբերում մասնակցում էր 15 երկրի 56 ուսուցիչ:

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՎԵՐՋԻՆ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Հուլիսի 3-ին անցկացվեց Մանկավարժական համալսարանի ուսումնական տարվա վերջին նիստը:

ՀՊՄՀ պրոռեկտոր Արա Երեմյանը ներկայացրեց «Մանկավարժական կրթությունը թվային հասարակությունում. մարտահրավերները, խնդիրները, հեռանկարները» խորագրով միջազգային մեդիաֆորումի արդյունքները: Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի՝ որպես ԱՊՀ երկրների մանկավարժական կադրերի պատրաստման բազային կազմակերպության կողմից 2019 թվականի հունիսի 6-7-ը կազմակերպված միջազգային մեդիաֆորումին մասնակցել են ԱՊՀ երկրների և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության առաջատար մանկավարժական բուհերը: Հայաստանի Հանրապետությունից ֆորումին մասնակցել է մեր համալասարանը՝ թվային հեռահաղորդակցության կապի միջոցների կիրառմամբ:

Պրոռեկտորը հանգամանորեն ներկայացրեց ֆորումում քննարկված հարցերը՝ միաժամանակ ընդգծելով, որ մեդիաֆորումի հիմնական գաղափարը կրթական և գիտահետազոտական գործունեությունը ժամանակակից թվային տնտեսության պահանջներին համապատասխանեցնելն էր:

ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն իր ելույթում նշել է, որ «խիստ այժմեական է Թվային համալսարանների մոդելի մշակումը և ԱՊՀ մասնակից պետությունների անցումը այդ մոդելին»: Ռեկտորի խորին համոզմամբ՝ այդ փոխակերպումը կապահովի մեթոդաբանական մոտեցումների, թվային տեխնոլոգիաների, տեխնոլոգիական լուծումների միասնությունը և կրթական գործունեության ցանկացած բարեբոխման գլխավոր դերակատարի հաջողությունը:

Գիտական խորհուրդը հավանություն տվեց ֆորումում ներկայացված մանկավարժական կրթության մասին զեկույցին, թվային մանկավարժական համալսարանի և թվային դպրոցի ռազմավարության նախագծին և որոշեց թվային հասարակությունում մանկավարժական կրթությունը փոխակերպելու գործընթացին մասնակցելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր ձեռնարկել:

Համալսարանի կառուցվածքային փոփոխությունները ներկայացրեց պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը: Գիտական խորհուրդը որոշեց ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկել միավորել Կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի և Քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնները՝ որպես Կենսաբանության, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, Իրավագիտության և նրա դասավանդման մեթոդիկայի և Քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնները՝ որպես Հասարակագիտության ամբիոն, Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության և Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնները անվանել Մանկավարժության համահամալսարանական ամբիոն:

2018-2019 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքները ներկայացրեց պրոռեկտոր Միեր Մելիք-Բախշյանը:

Գիտական խորհուրդը որոշեց հանձնարարել համալսարանի ֆակուլտետների դեկաններին և ամբիոնների վարիչներին՝ նախքան ավարտական աշխատանքների պաշտպանությունը ամբիոնների նիստերում քննարկել դրանց ղեկավարների հաղորդումները և պաշտպանության երաշխավորել միայն բարձր մակարդակի աշխատանքները, նաև հաշվի առնել ավարտական աշխատանքների ու թեզերի թեմաների արդիականությունը:

Ս. Գևորգյանը, Ա. Սահրադյանը, Ա. Փիլիպոսյանը և Գ. Թադևոսյանը ներկայացրին Գիտական խորհրդին կից մշտական հանձնաժողովների հաշվետվությունները:

Անցկացվեց Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի դոցենտի երկու թափուր պաշտոնի թեկնածուների փակ-գաղտնի ընտրություն, որի արդյունքում Գիտխորհրդի 62 անդամներից ներկա 48 անդամների կողմից առավելագույն ձայներ ստացան Աշոտ Արամայիսի Գևորգյանը և Անդրանիկ Արամայիսի Ստեփանյանը:

Գիտական խորհրդի սկզբում ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը հոբելյանի առթիվ շնորհավորեց Գուրգեն Ղուլղազարյանին ծննդյան հոբելյանի առթիվ և մաղթեց արդյունավետ աշխատանք:

**«ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ-2019»**

# ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ, ՏՊԱՎՈՐԻՉ ԵՎ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ

➢1 հենց իրենց «տանը»:

Միջազգային համագործակցության բաժնի ղեկավարը հավելեց նաև, որ ծրագրի ընթացքում լսել են ուսանողների առաջարկները և առաջիկայում արտասահմանյան գործընկերների հետ կքննարկեն ծրագրում փոփոխություններ անելու անհրաժեշտության, հետագա զարգացման համար:

«Ամառային դպրոց»-ն այս տարի կրում էր «R-evolution»՝ արագ զարգացում խորագիրը. այդ շրջանակներում մասնակիցները հետազոտություններ էին կատարել կրթական բարեփոխումների վերաբերյալ՝ հարցախույզ անցկացնելով ինչպես հայ, այնպես էլ մեր երկրում կրթությունը շարունակող օտարերկրացիների շրջանում: Օտար երկիր, լեզվական արգելք, կրթական այլ համակարգ, ֆինանսական միջոցների բացակայություն, հաջողության երաշխիքների բացակայություն և այլն. սրանք այն հիմնական դժվարություններն ու խնդիրներն էին, որ առանձնացվել էին տարբեր բուհերի ուսանողներով համալրված խմբերի հետազոտության արդյունքում: Չնայած այս օրերին մասնակիցները չհասցրին ամբողջությամբ ծանոթանալ միմյանց կրթական համակարգերին, բայց կարողացան ներկայացնել իրենց պատկերացումներն ու տեսլականը կրթական ոլորտի բարեփոխումների վերաբերյալ. նրանք վստահ են՝ կրթությունը կարող է միավորել աշխարհը:

Փակման հանդիսավոր արարողությանը ուսանողների մի մասը ներկայացրեց ազգային երգն ու պարը, բեմադրություն, հումոր, մյուսները ժամանցային և մշակութային գերհագեցած տասնօրյակն ամփոփեցին տեսաշարով:

Օտարազգի ուսանողները տպավորված էին Հայաստանով և «Ամառային դպրոց 2019» ծրագրով, որը բազմակողմանի հագեցած էր և լավ կազմակերպված: Մեզ հետ զրույցում նրանք խոստովանեցին՝ Հայաստանը սիրեցին դեռ օդանավակայանից, իսկ հետո առիթ ունեցան վայելել մեր երկիրն իր ողջ հմայքով՝ հիասքանչ բնությամբ, հարուստ պատմությամբ ու մշակույթով:

Մասնակիցները շնորհակալություն հայտնեցին Մանկավարժական համալսարանին արդյունավետ, տպավորիչ և անմոռանալի ծրագիր կազմակերպելու համար և խոստացան հնարավորության դեպքում անպայման վերադառնալ իր հյուրընկալությամբ առանձնացող Հայաստան:

Նշենք, որ Մանկավարժական համալսարանի Աղավնաձորի ուսումնական բազայում անցկացվող տասնօրյա «Ամառային դպրոց 2019» մասնակիցները ներկայացնում էին Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական, Պետական մանկավարժական, Ա. Ս. Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտուտի, Սանկտ Պետերբուրգի տնտեսագիտական, Բելառուսի Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական, Չեխիայի Պարդուբիցեի, Չինաստանի Հարավ-արևմտյան, Արցախի պետական և Հայկական պետական մանկավարժական համալսարանները:

***Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ***

# Գրողների միջազգային ֆորումում

Ղազախստանի մայրաքաղաք Նուրսուլթանում հուլիսի 4-5-ը տեղի է ունեցել Եվրասիական Միության երկրների մայրաքաղաքների գրողների միջազգային ֆորում, որին մասնակցելու համար Հայաստանից հրավիրվել էր Մանկավարժական համալսարանի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալլիտա Դոլուխանյանը:

Ֆորումին պրոֆեսոր Դոլուխանյանը հանդես է եկել «Ժամանակակից հայ գրականության հիմնական միտումները և համընդհանուր գրականությունը» խորագրով զեկուցմամբ՝ վստահեցնելով, որ «դարավոր ավանդույթներ ունեցող հայ գրականությունն այսօր էլ պահպանում է իր մեծ հետաքրքրությունը դեպի բոլոր ազգերի գրականությունները՝ համամարդկային գրական երևույթներին մշտապես հաղորդակից լինելու իր տևական մղումով»:

«Թարգմանությունների կարևորությունը իմ նախնիները զգացել են դեռևս V դարում՝ հայոց

այբուբենի (405թ.) ստեղծումից հետո: Մեր մտավորականները հենց V դարում հայ ազգին ծանոթացրին համաշխարհային գրականությանն ու գիտությանը: Եվ կատարեցին թարգմանություններ հին հունարենից, ասորերենից, պարսկերենից, եբրայերենից: Այդ թարգմանությունների մի մասը իրենց բնագրային լեզուներով կորել են, և այսօր գիտական աշխարհին հայտնի են միայն հին հայերենով: Այդ գործերից են Փիլոն Ալեքսանդրացու երկերի մեծ մասը, Եվսեբիոս Կեսարացու պատմագիտական մեծ արժեք ունեցող «Ժամանակագրությունը», Հերմես Եռամեծի մի քանի գործերը և այլն»:

«Այսօր էլ արդիական է գրականությունների կապի ու փոխներգործության խնդիրը,-իր զեկուցման մեջ ասել է Ա. Դոլուխանյանը: -Շատ տաղանդավոր գրողներ կան աշխարհում, որոնք ստեղծագործում են իրենց ազգային լեզուներով: Հիմա՝ քսանմեկերորդ դարում, երբ տեխնոլոգիական առաջընթացն ավելի է մոտեցրել աշխարհի տարբեր ազգերին, հանկարծ գիտակցում ես, թե Հին Կտակարանի «Ժողովողի» իմաստությունը չի հնացել, և այսօր էլ կարևոր է մեր հանճարեղ Գրիգոր Նարեկացու երազանքը՝ մարդուն տեսնել բոլոր մեղքերից մաքրված և չարիքից հեռու, ու այդ երազանքը բոլոր ազգերի համար է:

Նման համաժողովները մերձեցնում են տարբեր ազգերին, հնարավորություն ստեղծում սովորել մեկը մյուսից, հետևել կատարյալին և միասնական գնալ մարդկային ընդհանուր մտավոր ժառանգության կերտմանը:

Ահա այս առումով Ղազախստանի Նուրսուլթան մայրաքաղաքի գրողների համաժողովն իրականացնում է գրական ու պատմական մեծ առաքելություն:

Որպես Հայաստանի գրողների միության անդամ հավաստիացնում եմ, որ դարավոր ավանդույթներ ունեցող հայ գրականությանը այսօր պահպանում է իր մեծ հետաքրքրությունը դեպի բոլոր ազգերի գրականությունները՝ համամարդկային գրական երևույթներին մշտապես հաղորդակից լինելու իր տևական մղումով»:

# «Ֆինանսական կրթությունը դպրոցում»

«Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագրի շրջանակում Մանկավարժական համալսարանում մեկնարկել են ՀՀ կենտրոնական բանկի և ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ անցկացվող վերապատրաստումները:

Օգոստոսի 21-ից մեկնարկել է դասվարների, մաթեմատիկայի և հասարակագիտության ուսուցիչների վերապատրաստումը բոլոր մարզերում և Երևանում: Այս տարի Մանկավարժական համալսարանի հետ համագործակցությամբ նախատեսված է վերապատրաստել 360 դպրոցից 3000 ուսուցչի:

Ծրագիրը նպատակ ունի սովորողների մեջ զարգացնել անձնական ֆինանսների վերաբերյալ պատասխանատու որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ ունակություններ՝ ինտեգրելով ֆինանսական տարրեր «Ես և շրջակա աշխարհը», «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» և «Հասարակագիտություն» առարկաներում: Օրինակ՝ Մաթեմատիկայի դասընթացում 5-6-րդ դասարաններում տոկոսներ հաշվելուն զուգընթաց խնդիրների, գործնական, նախագծային և հետազոտական աշխատանքների միջոցով ուսուցիչները սովորողների հետ քննարկելու են նաև ֆինանսական տարբեր իրադրություններ: Վերջիններս կարող են լինել շատ բազմազան և հիմնականում ընդգրկում են 7 թեմատիկ ոլորտներ՝ տնտեսություն, բյուջե, խնայողություններ, պարտք, գնումներ, իրավունքներ, անվտանգություն:

«2015 թվականից իրականացվող այս ծրագիրը ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարության կարևորագույն ծրագիրն է և անցել է տարբեր փուլերով. 2015 թվականին, միջազգային փորձը հաշվի առնելով, ստեղծվել է սովորողների ֆինանսական կոմպետենցիաների մատրիցը, որից հետո 1012 փորձագետներից բաղկացած աշխատանքային խումբը մշակել է նշված առարկաների չափորոշիչները, ծրագրերը և ուսուցիչների մեթոդական ձեռնարկները: 2017-2018 ուսումնական տարում ծրագիրը հաջողությամբ փորձարկվել է և 2018-ի սեպտեմբերից ներդրվել է 346 դպրոցներում՝ վերապատրաստելով 2532 ուսուցիչ»,- ասաց ՀՀ կենտրոնական բանկի սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման կենտրոնի մասնագետ և ծրագրի համակարգող Արթուր Փոքրիկյանը, և հավելեց, որ այս տարի ուսուցիչների վերապատրաստման 2-րդ փուլի արդյունքում կրկնակի շատ սովորողներ կներառվեն ծրագրում:

Ծրագրի փորձարկման ընթացքում իրականացված ֆոկուս խմբերը ցույց են տալիս նաև, որ ֆինանսական ունակությունները զարգանում են ոչ միայն աշակերտների, այլ նաև նրանց ծնողների և ուսուցիչների մոտ:

Նշենք, որ ծրագրի ուսուցիչների վերապատրաստումները մարզերում և Երևանում իրականացվում են շուրջ 90 ֆինանսական և մեթոդական թրեյներների կողմից: Այս տարի թրեյներների շարքերը համալրել են նաև Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից, ինչը կրկնակի կարևոր է՝ հաշվի առնելով համալսարանի դերը մանկավարժներ պատրաստելու գործում:

***Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ***

# «Թանգարան-դպրոց համագործակցություն» դասընթաց-վարժանք ՀՊՄՀ-ում

Համաշխարհային կրթական պրակտիկայում հատուկ ուշադրություն է դարձվում թանգարանի և դպրոցի մանկավարժի համագործակցության բարդ և բազմակողմանի խնդիրների լուծման ընթացքում դպրոցականներին մշակույթին ծանոթացնելուն: Այս խնդիրները հիմնականում կապված են նրանց մոտ մշակույթի նկատմամբ սկզբնական հետաքրքրություն առաջացնելու հետ: Միաժամանակ այսպիսի համագործակցության իրականացումը որոշվում է մի շարք պայմաններով, որոնցից կարևորագույնը ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունն է թանգարանային աշխատակիցների կողմից մշակութային բնագավառում առաջարկվող գործունեության համար: Բացի այդ, թանգարանի և դպրոցի համագործակցությունը պետք է հենվի ուսուցչի հումանիտար կուլտուրայի, նրա անձնական շահագրգռվածության և գեղարվեստական ինքնակրթության զարգացման վրա: Միայն այս պայմաններին հետևելով դպրոցի և թանգարանի համագործակցության գործընթացը կլինի արդյունավետ:

Կարևորելով թանգարան-ուսուցիչ կապը՝ Մանկավարժական համալսարանում անցկացվեց ՀՀ մշակույթի նախարարության կողմից հաստատված ուսուցիչների վերապատրաստման «Թանգարան-դպրոց համագործակցություն» դասընթաց-վարժանքի ծրագիրը:

«Թանգարան-դպրոց համագործակցություն» ծրագրի նպատակն է թանգարան-ուսուցիչ համագործակցության շրջանակներում ակտիվացնել դպրոցականների լսարանի այցը թանգարան: Ուսուցիչների համար նախատեսված այս ծրագիրը միևնույն ժամանակ նպատակ ունի գրավել նրանց ուշադրությունը դեպի թանգարան, վերազինել գիտելիքներով, որը նրանք կօգտագործեն կրթական և դաստիարակչական նպատակներով:

Ուսուցիչները մասնակցեցին դասընթացների՝ ծանոթանալով ուսուցչի թանգարան-դպրոց համագործակցության միջազգային փորձին, այս բնագավառում ունեցած մեր խնդիրներին և այս հարցի լուծման գործում նրանց դերի կարևորությանը: Պարապմունքներն անցկացվեցին դասախոսությունների և սեմինարների ձևով՝ հիմնականում երկխոսության միջոցով:

Ծրագրի ընթացքում երևանյան մի շարք խոշոր թանգարանների տնօրեններ և աշխատակիցներ ներկայացրին դպրոցականների համար ընդգրկուն ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն երևանյան տարբեր դպրոցների շուրջ 17 ուսուցիչների: Ծրագրի շրջանակում ուսուցիչները հնարավորություն ունեցան հյուրընկալվել Երևանի մի քանի թանգարաններ՝ տեղում ծանոթանալու կրթական ծրագրերին:

Դասընթաց-վարժանքի արդյունքում համագործակցելով թանգարանների հետ՝ դպրոցի ուսուցիչները ստեղծեցին կրթական ծրագրեր աշակերտների համար:

***Լիլիթ ՍԵՓՅԱՆ***
***Թանգարանի ավագ գիտաշխատող***

# ՀԵՏԻՈՏՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԿՈՒ ՀԱՆՃԱՐԵՂ ՀԱՅԵՐԻՆ

Տարին հոբելյանական է, երկու հանճարեղ հայերի՝ Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 150-ամյակներին յուրօրինակ շուք ու նրբերանգություն հաղորդեց Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի աշխարհագրության ամբիոնի պրոֆեսոր, աշխարհագետ Յուրիկ Մուրադյանը, որը նախաձեռնեց չորսօրյա հետիոտն ուղևորություն Դսեղ-Վանաձոր-Դիլիջան-Սևան-Երևան 170 կմ երկարության երթուղով՝ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդավայրից մինչև Կոմիտասի պանթեոն: Հետիոտն ուղևորության նշանաբանն էր՝ «Պահպանենք ազգային անաղարտ պոեզիան և երաժշտությունը»:

«Եվ այսպես, հանրապետության տարածքում և նրանից դուրս հետիոտն ուղևորության մեծ փորձ ունեցողիս սպասվում էր նոր քննություն՝ միայնակ հաղթահարել վերոհիշյալ երթուղին: Օգոստոսի 14-ի կեսօրին ավտոմեքենայով մեկնեցի Դսեղ, ևս մեկ անգամ ծանոթացա Հովհ. Թումանյանի տուն-թանգարանին, զրուցեցի թանգարանի աշխատողների հետ, իմացա տարվա կարևոր միջոցառումների մասին:

Դսեղի համայնքապետարանում հյուրընկալվեցի համայնքապետ Գառնիկ Հովսեփյանին: Զրուցեցինք համայնքի հոգսերի մասին: Ժամանակին գյուղը հիմնականում ուներ կաթնաանասնապահական տնտեսություն, որին զուգահեռ կար և ոռոգովի հողագործություն՝ պտղաբուծություն, ծխախոտի, բանջարեղենի, հացահատիկի մշակություն, բայց վարելահողերն այսօր վերածվել են խոտհարքների:

Դսեղը հին բնակավայր է, որտեղ պահպանվել են բազիլիկ ( 654 թ.) և Մամիկոնյան իշխանների հիմնադրած (VII դ.) եկեղեցիները՝ խաչքարերով ու կոթողներով:

Հիրավի հիասքանչ է Լոռու ձորը: Ահա և այն տեղը, որտեղ իրար են միախառնվում Ջորագետ և Փամբակ գետերը, որտեղից և գետը կոչվում է Դեբեդ: Միախառնման հատվածում հսկա ժայռ է՝ «Անուշի քարը»: Ավանդությունն ասում է, որ խելագարված Անուշն այդտեղից է ցած նետվել:

Հիասքանչ է Դսեղն իր շրջակայքով: Ակամայից հիշում ես մեծ բանաստեղծի գրած հիասքանչ տողերը. «Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակած, Ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝...» կամ՝ «Ամպերը դանդաղ ուղտերի նման՝ Նոր են ջուր խմած ձորից բարձրանում...»:

Նայում ես շուրջդ՝ գեղատեսիլ Բազումի, Հալաբի, Սևորդյաց, Գուգարաց անտառածածկ լեռներն են, Դեբեդի, Ջորագետի, ապա և Փամբակի, Մարցի հովիտները: Մանկության տարիներին ինչքան է խաղացել մեծ բանաստեղծը շռայլ բնության մեջ, վազել գյուղի հանդերում, ինչը հետագայում անսպառ նյութ է հանդիսացել թումանյանական պոեմների, լեգենդների ու բալլադների, հեքիաթների, բանաստեղծությունների, խոհափիլիսոփայական քառյակների համար...

***Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.***
***Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.***
***Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,***
***Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:***

Հրաժեշտ տալով անմահ Թումանյանի հարազատ գյուղին, որտեղ ապրել է իր մանկության և պատանեկության 14 տարիները, Փամբակի ձախ ափով ընթանում ենք դեպի Վանաձոր: Այստեղ էլ նկատվում է, որ շատ տեղերում վարելահողերը վերածվել են արոտավայրերի ու խոտհարքների: Հետիոտն ուղևորության առումով առաջին օրն ամենահանգիստն էր: Նայում ես Վանաձորի համայնապատկերին ու խորհում: Երբեմնի միութենական նշանակություն ունեցող արդյունաբերական այս հսկան մեծ անկում է ապրել: Կառուցվածքային փոփոխություններ տեղի են ունեցել ոչ միայն Լոռու մարզի գյուղատնտեսության, այլև սոցիալական ոլորտում:

Վանաձոր-Լերմոնտովո-Մարգահովիտ-Դիլիջան ճանապարհն անցնում է ՀՀ ռեկրեացիոն նշանակություն ունեցող տարածքով, որը բնութագրվում է գեղատեսիլ լանդշաֆտներով, հանքային ջրերով, անտառներով, պատմամշակութային հուշարձաններով: Մոտենում ենք «Դիլիջան» ազգային պարկին: Այն ստեղծվել է 1958-ին և զբաղեցնում է 24 հզ. հա տարածք: Նպատակը բուսական և կենդանական աշխարհի պահպանումը, հարստացումը և նոր տեսակների ստացումն է: Դիլիջանը լեռնակլիմայական, բալնեոլոգիական հայտնի առողջարան է: Բուժիչ միջոցներն են անտառային թարմ, թթվածնով հարուստ օդը, տաք արևը և ածխաթթվային հիդրոկարբոնատային նատրիումային սառը ջուրը: Մեզ ողջունեց «Լեռնային Հայաստան» առողջարանային համալիրի ցուցանակը, որի վերևում նրա հետ ոչ մի ընդհանրություն չունեցող գարեջրի երկու շշերի գովազդ էր տեղադրված...

Անցնում ենք Անտառամուտ, Չկալով, Լերմոնտովո, Մարգահովիտ, Ֆիոլետովո և այլ գյուղերի մոտով: Աչք են շոյում մոլականների խնամքով մշակած բանջարանոցները: Այստեղ առատ է կաղամբը և գազարը: Ի դեպ, նրանք աչքի են ընկնում նաև դրանց թթվի ստացման վարպետությամբ: Շուկայի հիմնական առևտուրը նրանց ձեռքում է:

Դիլիջանից դուրս բավական երկար ձգվում է Կամոյի փողոցը: Վերջինիս ո՞ր արժանիքների համար է փողոցը կոչվում նրա անունով՝ բանկ թալանելո՞ւ, Լենինին ծառայելո՞ւ և ֆինանսավորելո՞ւ համար... Հաճախակի ես տեսնում առանձնատներ, օբյեկտներ, ցանկապատված հողակտորներ, որոնց վրա գրված է՝ «Վաճառվում է»: Ափսոսում ես, որ այդպես է: Ա. Գրիբոյեդովը Թիֆլիսից Երևան ուղևորության ընթացքում 1829 թ. փետրվարի 2-ին գիշերել է Դիլիջանում: Դիլիջանը և նրա շրջակայքը հարուստ է հնագիտական և ճարտարապետական հուշարձաններով: Այստեղ մի գողտրիկ անկյունում մայրուղուց 200 մ խորքում գտնվում է Էդվարդ Միրզոյանի անվան կոմպոզիտորների ստեղծագործական տունը: Ի դեպ, խորհրդային տարիներին լավ և բարի ավանդույթ կար՝ գրողները, նկարիչները, կոմպոզիտորներն ունեին իրենց ստեղծագործական և հանգստի տները: Ինչքա՜ն լավ կլինի, որ այս ցանկն ավելացվի... Գիշերում ենք Դիլիջանում:

Դիլիջան-Սևան երթուղու քայլարշավն իրականացվեց երրորդ օրը: Դա թերևս ուղևորության ամենածանր օրն էր: Ճանապարհի առաջին հատվածը՝ մինչև թունելը վերելք է: Դժվարությամբ հաղթահարեցի Փամբակի լեռնաշղթայի վրայով անցնող ճանապարհի ոլորանները՝ շրջադարձերը, որոնց թիվը թունելի կառուցումից հետո կրճատվել է: Օրենքով արգելվում է թունելի տարածքը ոտքով անցնել (բացի սպասարկող անձնակազմից), ուստի այն անցնում եմ ավտոմեքենայով: Կեսօրյա շոգը և բարդ շրջադարձերը շատացրին ոտնաբշտերը, քայլելը դարձնելով ավելի դժվար: Տավուշից մտնում ենք Գեղարքունիքի մարզ: Վայրէջքով աչքի ընկնող ճանապարհը համեմատաբար հեշտ հաղթահարելի է: Ահա և կապուտաչյա Սևանը՝ մեր լեռնային գեղեցկուհին: Օդը պարզ է և արևոտ: 100-150 կմ/ժամ արագությամբ սլացող ավտոմեքենաներով Սևանի ափ են շտապում հանրապետության տարբեր մարզերից, բայց ամենից առաջ՝ Երևանից, Կոտայքի, Լոռու, Տավուշի մարզերից այստեղ շտապող քաղաքացիները: Ուրախալի էր, երբ վարորդները ազդանշաններով ողջունում էին, իսկ մի քանի դեպքում կանգ առան ձեռք սեղմելու համար: Ուղևորության առաջին երեք օրերի ընթացքում պետավտոտեսչության ոչ մի ավտոմեքենա չտեսանք ճանապարհներին: Շաբաթ և կիրակի օրերին այդպիսի բանուկ ճանապարհներն աչքաթող անելը մեծ վրիպում է: Երեկոյան կողմ հասանք Սևան: Բարակ անձրև տեղաց, օդի ջերմությունը 17 աստիճան էր, ավելի քան քսան աստիճան պակաս, քան այդ պահին Երևանում էր: Գիշերեցի Սևանի թերակղզուց հարավ ափամերձ հատվածի մի քոթեջում:

Սևան-Երևան ճանապարհահատվածը նախատեսված էր անցնել երկու օրում: Սակայն առավոտյան ճանապարհ դուրս գալուց հաշված րոպեներ անց, երբ տեսա «Երևան՝ 57 կմ» ցուցանակը, ծրագիրը փոխվեց: Որակյալ, հիմնականում վայրէջքով աչքի ընկնող ավտոմայրուղին, ամպամած զով եղանակը նպաստեց գնալ ռիսկի: Հրազդան, Չարենցավան, Աբովյան քաղաքները գլխավոր մայրուղուց դուրս են: Ըստ նախնական տարբերակի այդ օրը պետք է հասնեի Չարենցավան: Սակայն իմաստ չուներ ճանապարհից թեքվել բավական ճանապարհ կտրելով հասնել Չարենցավան, մյուս օրն էլ այդ նույն ճանապարհով հետ գալ գլխավոր մայրուղի: Դրա փոխարեն ճիշտ էր միանգամից Երևան գնալ, որն էլ լավագույն տարբերակն էր: Փաստորեն օգոստոսի 18-ի առավոտյան ժամը 5-ին Սևանի մոտից դուրս գալուց 15 ժամ անց, հաղթահարելով 57 կմ ճանապարհը, բավական հոգնած հասա Երևան:

Ավարտվեց Դսեղ-Վանաձոր-Դիլիջան- Սևան-Երևան միայնակ հետիոտն ուղևորությունը՝ նվիրված Ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանի և մեծ երգահան Կոմիտասի հոբելյանական 150-ամյակներին: Ուղևորության ընթացքում կտրեցի 170 կիլոմետրից ավելի ճանապարհ, իսկ քայլաչափ սարքը ցույց էր տալիս, որ ճանապարհորդության ընթացքում կատարել եմ մոտ 285 հազար քայլ:

Հաջորդ օրն այցելեցի Կոմիտասի պանթեոն՝ ծաղիկներ դնելու մեծ երգահանի շիրիմին, ինչպես նաև Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, որը հիմնադրվել է 2015-ին և Երևանի կարևոր մշակութային օջախներից է: Թանգարանի ճարտարապետն է Արթուր Մեսչյանը: Այդտեղ կան շատ հետաքրքիր ցուցանմուշներ, Կոմիտասի անձնական իրեր, գրքեր, լուսանկարներ, Կոմիտասի դաշնամուրը: Թանգարան-ինստիտուտը միտված է կոմիտասագիտության զարգացմանը, Կոմիտասի ստեղծագործական ժառանգության հետազոտմանն ու հանրահռչակմանը»:




Կարդալով աշխարհագետի ֆեյսբուքյան գրառումները՝ մեզ մնում է շնորհավորել պրոֆեսոր Յուրիկ Մուրադյանին՝ հետիոտն երթուղին միայնակ անցնելու խիզախության և մեծն Թումանյանի և Կոմիտասի հոբելյանների հանդեպ ակնածանքի ոգով սերունդներին նման դաս մատուցելու համար:

# ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆԸ

Հունիսի 23-ից 29-ը էրազմուս+ Բարձրագույն կրթությունում կարողությունների զարգացման գործողության շրջանակներում «Հայաստանյան համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարկեթինգի խթանում (BOOST)» ծրագրի շրջանակներում 29 մասնակիցներ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Հայաստանի Ամերիկյան, Շիրակի պետական, Վանաձորի պետական համալսարաններից, Կոմիտասի անվան Երևանի պետական կոնսերվատորիայից, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից և Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային կենտրոնից մասնակցեցին Իսպանիայի Ռովիրա և Վիրջիլիի համալսարանում կայացած վերապատրաստմանը, միջազգայնացման շաբաթին և ծրագրի համակարգման հանդիպմանը: Հանդիպմանը ներկա էին նաև մասնակիցներ այլ երկրներից: Մեկշաբաթյա վերապատրաստման ընթացքում մասնակիցները ծանոթացան Իսպանիայի Ռովիրա և Վիրջիլիի համալսարանի միջազգային բաժնի կառուցվածքին, ռազմավարությանը, իրականացվող աշխատանքներին, ինչպես նաև յուրաքանչյուր հաստատություն ներկայացրեց իր բուհի միջազգային բաժնի աշխատանքներն ու կառուցվածքը: Մասնակիցներին հնարավորություն ընձեռվեց նաև մասնակցել Erasmus+ SUCTI ծրագրի կոնֆերանսին, որի համակարգողն է Իսպանիայի Ռովիրա և Վիրջիլիի համալսարանը: Erasmus+ SUCTI ծրագիրն ուղղված է միջազգայնացման խթանմանը համալսարանների ադմինիստրատիվ աշխատակիցների շրջանակում:

Վերապատրաստումներին հաջորդեց նաև ծրագրի համակարգման հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին ծրագրի արդյունքներն ու ձեռքբերումները, ինչպես նաև ծրագրի հետագա գործողությունների շրջանակը:

Վերապատրաստված մասնակիցները կանցկացնեն նմանատիպ վերապատրաստումներ հայաստանյան մասնակիցների համար:

Հիշեցնենք, որ ծրագրի համակարգողն է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը և ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության էրազմուս+ ծրագրի կողմից:

# ՄՈՍԿՎԱՅԱԲՆԱԿ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի հայկական «Վերածնունդ» կիրակնօրյա դպրոցի սաներից շատերն այս ամառ իրենց արձակուրդներն անցկացրին մայր հայրենիքում:

Հայրենիքում ամառային արձակուրդներն անցկացնող դպրոցի սաները տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու Շողիկ Փահլևանյանի, դպրոցի ուսուցիչների և ծնողների հետ այցելեցին բազմաթիվ թանգարաններ, գրադարաններ, թատրոններ և համերգասրահներ, ինչպես նաև եկեղեցիներ: Մասնավորապես նրանք ներկա գտնվեցին Ռաֆայելյանների պարային դպրոցի 35-ամյակին նվիրված և Պարի պետական թատրոնի հաշվետու համերգներին, Ա. Խաչատրյանի տուն-թանգարանում ունկնդրեցին դպրոցի սան, բազմաթիվ միջազգային մրցույթների դափնեկիր Կարինա Տեր-Ղազարյանի մենահամերգը, այցելեցին Խամաճիկների պետական թատրոն, մասնակցեցին «Կտրիճ Դավո» մանկական վոկալ երգ-երաժշտության փառատոնին, Խնկո-Ապոր անվան ազգային և Կոտայքի մարզային գրադարաններ, Սբ. Կաթողիկե, Սբ. Աննա, Սբ. Աստվածածին Զորավոր եկեղեցիներ, Սբ. Անանիա առաքյալի մատուռ, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան՝ դիտելու մեծն Կոմիտասի 150-ամյակին նվիրված ցուցահանդեսը, Հ. Թումանյանի և Մ. Սարյանի թանգարաններ, Գաֆէսճեան արվեստի կենտրոն, Հ. Իգիթյանի մանկական պատկերասրահ և էսթետիկայի ազգային կենտրոն, և, իհարկե, Մատենադարան՝ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ:



Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի աշակերտները, նրանց ծնողները հաղորդակից եղան իրենց արմատներին, ծանոթացան, իրենց նախնիների պատմությանը, թողած բարձրարժեք ժառանգությանը՝ հայրենաճանաչության և հայապահպանության նոր ընկալումներով ու զգացողություններով սկսելու ուսումնական տարին:

***Շողիկ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ***

# ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԸ




Մանկավարժական համալսարանը գիտական հանրությանն է ներկայացնում WISDOM հանդեսի 2019 թվականի առաջին համարը: Հանդեսի 1(12) համարում զետեղվել են 10 հոդվածներ, որոնք արտացոլում են հանդեսում ավանդաբար ներկայացվող «Իմացաբանություն, գիտության փիլիսոփայություն, մետափիլիսոփայություն, փաստարկում», «Սոցիալական և քաղաքական փիլիսոփայություն», «Փիլիսոփայության պատմություն», «Կրոնի տեսություն և պատմություն» բաժինների հիմախնդիրները: Հոդվածների հեղինակները ներկայացնում են հեղինակավոր բուհական ու ակադեմիական հաստատություններ: Երեք հոդվածների հեղինակները Մանկավարժական համալսարանի գիտական-դասախոսներն են՝ բանասիրական գիտությունների դոկտոր Լալիկ Խաչատրյան, փիլիսոփայական գիտությունների թեկնածուներ Անդրանիկ Ստեփանյան և Ռոմիկ Քոչարյան:

Պահպանելով և կարևորելով երիտասարդ գիտնականների աճն ապահովող հարթակ դառնալու իր միտումը՝ WISDOM-ը այս համարում ևս իրականացնում է երկու ասպիրանտների (այդ թվում՝ ՀՊՄՀ «Հոգեբանություն» մասնագիտությամբ ասպիրանտ Երվանդ Ռումյանի) հոդվածների հրատարակությունը հանդեսի «Երիտասարդ գիտնականի ամբիոն» բաժնում:

«Հիշատակի տուրք» բաժնում անդրադարձել ենք WISDOM-ի խմբագրական խորհրդի անդամ լուսահոգի պրոֆեսոր Վյաչեսլավ Ստյոպինին, ում հետ WISDOM-ի խմբագրակազմը ուներ երկարամյա բեղուն և արդյունավետ գիտական, բարեկամական համագործակցություն:

Ամսագրի խմբագրական խորհրդի կազմը համալրվել է երեք հռչակավոր փիլիսոփաներով, մասնավորապես՝ Էվանդրո Ագացցի՝ Մեխիկոյի Պանամերիքյան քաղաքային համալսարանի (Մեքսիկա) բիոէթիկայի բաժանմունքի պրոֆեսոր, Ֆրիբուրգի (Շվեյցարիա) և Ջենովայի (Իտալիա) համալսարանների պրոֆեսոր էմիրիտուս, Գիտության փիլիսոփայության միջազգային ակադեմիայի (Բրյուսել) նախագահ, Փիլիսոփայական ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (FISP) և Փիլիսոփայության միջազգային ինստիտուտի (Փարիզ) նախկին նախագահ (այժմ՝ Պատվավոր նախագահ), Մարիա Բաղրամյան՝ փիլիսոփայության պրոֆեսոր (Իռլանդիա), Դուբլինի համալսարանին առընթեր փիլիսոփայության քոլեջի (UCD) ղեկավար, Թագավորական իռլանդական ակադեմիայի անդամ (MRIA), Փիլիսոփայական ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (FISP) վարչական հանձնաժողովի անդամ, Անդրեյ Սմիրնով՝ ակադեմիկոս, փ.գ.դ., ՌԴ գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության ինստիտուտի տնօրեն:

Նշենք, որ Մանկավարժական համալսարանի WISDOM գիտական պարբերականն ընդգրկվել է Scopus գիտաչափական շտեմարանում: Սա համալսարանի և մեր երկրի համար աննախադեպ իրադարձություն է և մեծ ձեռքբերում: WISDOM-ն ընդգրկված է նաև ՀՀ ԲՈՀ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական ժողովածուների ցանկում; Այն գրանցված է 15՝ Scientific Indexing Services (SIS), Journal Impact Factor (JIF), Eurasian Scientific Journal Index (ESJI), Scientific Journal Impact Factor (SJIF), International Scientific Indexing (ISI), European Reference Index for the Humanities and Social Sciences (ERIH PLUS), Advanced Scientific Index (ASI), eLIBRARY (ՀԼԾԵ), EBSCO, CYBERLENINKA, CROSSREF, PHILPAPERS, WORLDCAT Google Scholar միջազգային գիտաչափական շտեմարաններում:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2019-2020 ուստարում Մանկավարժական համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի վճարովի ուսուցման առկա և հեռակա համակարգի ուսանողները կարող են ուսման վարձը վճարել ըստ կիսամյակների կամ ուսումնական ամիսների:

Ուսման վարձի վճարման նոր ձևի ժամանակացույցին կարող եք ծանոթանալ համալսարանի aspu.am կայքէջում:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 04.09. 2019 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ